

ՄՕԼԼԱ—ՍԻԼԷՅՄԱՆ ԳԻՒՂԷ Ի ԿԱՂԶՈՒԱՆՆԻ:

Մօլլա-սիւլէյմանն (Էլաշկերտի յարեմուտս) զիւղէ ի կաղզուան կանցնին Պուլանուխէ, Խնուսէ, Մանազկերտէ և ի Մշոյ եկող ճանապարհորդներն:

Մօլլա Սիւլէյմաննէ $\frac{5}{4}$ ժամ ի հիւսիս ճանապարհորդելով դաշտի վերջաւորութեան վերայ հասանք Խօփուզ գետոյն, մէկ քիլոմէթրի չափ ջրի ափն ի վեր քայլելով հարկ եղաւ Գիլբուն սարի յարեւելս վերջաւորութեան վերայ անցնել ջրի ձախ ափն (յարեւելս), ուստի մեր ընթացք ձախ ափն ի վեր շարունակելով $\frac{1}{4}$ ժամէն ներքին Խօփուզ զիւղն թողինք մեր հանդէպ ջրի աջ ափին վերայ:

Մեր ճանապարհը ուղղակի հիւսիս է, $\frac{5}{4}$ ժամէն հասած ենք վերին Խօփուզայ հանդէպը, ճանապարհից քիչ բարձր, մեր աջ կողմն թողած եմք Տար-Ուլիճ (վայտեայ թուր), կեաւրակեալը (մոխրագոյն քար) և Հաճի ֆեամըլի Գոմ գիւղօրայքն:

Աստի ևս մեր ճանապարհը շարունակելով $1\frac{1}{2}$ ժամէն հասած ենք Շահօլին, որ շղթայի գագաթէն յարեմուտս ձգուած է:

Մեր ուղղութեամբ մի ժամէ ևս Գործելի (ածուխ) քարեր: Արդ մեր աջ կողմն, յարեւելս երկու ժամ հեռաւորութեան վերայ կը տեսնուի Վուարէ կօշտեան քրդերու վրանավարը (վրան կանգնելու և հօտը արածեցնելու վայր): Սորա արեւելեան հարաւային կողերից կը սկսի Խաչըւայ գետն, որ Արածանի կերթայ, իսկ արեւմտեան հիւսիսային կշտէն Ղաղու-Ղայի ջուրն, որ Երասխ կը թափի: